

0073
0378
1914 № 2096.

ԷԿՍՕՆԳՐՈ ԴԷ ԱՄԻՉԻՍ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСПОМОЩЕННИЙ
Академии Наук
СССР

ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՆԵՐ

Թարգմ. Ա. Ս.



Վ. Ա. Դ. Ա. Բ Շ Ա. Պ Ա Տ

Ելեհրատարժ Տպարանի Մ. Արսուր

1914

85Կ.
Ս-52

ՀԲԹ

ՀԲԹ

ԸՅԴ

ԸՅԿ

ԸՅԸ

NOV 20 1914

ԷԳՍՕՆԳՕ ԴԷ ԱՍԻԶԻՍ

ՓՈՔՐԻԿ ՀԵՐՈՍՆԵՐ



Թարգմ. Ս. Ս.



ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ելեհրաւարտ Տպարան Մ. Արսէնյ

1914

8 FEB 2013

277a

Գ Ա Ր Ի Բ Ա Ն Դ Ի

Իտալիայի ազատութեան մեծ հերոս
Գարիբալդին ծնուել է 1807 թուի յուլիս
ամսի 4-ին:

Մօտ 60 տարի առաջ Իտալիան մեծ, ու-
ժեղ, ազատ կազմակերպուած մի պետութիւն
չէր, այլ բաժանուած էր մանր իշխանու-
թիւնների, իսկ երկրի որոշ մասերը գտնուած
էին օտարների ձեռքի տակ: 1848 թուակա-
նից Իտալիայում սկսուած են մի շարք ապր-
տամբութիւններ, որոնց նպատակն էր այդ
բաժան-բաժան մասերը միացնել և կազմել
մի ուժեղ պետութիւն:

Գարիբալդին դառնում է ազատութեան
այդ կռիւների ոգին և առաջնորդը: Նրա
կամաւոր կռուողներից կազմած զնդերը
մի շարք փառաւոր յաղթութիւններ էին
տանում. ամեն մի իտալացի շտապում էր
մտնել նրա կամաւորների շարքերը հայ-
րենիքի ազատութեան համար կռուելու:
Նոյն իսկ զպրոցական երեխաները ոգևո-



60717-67

ըուած էին Գարիբալդու գործերով և շատերը տանից փախչում էին և Գարիբալդու բանակը շտապում: Այդպիսի աշակերտներից երեք հոգու պատմութիւնն է արած այս փոքրիկ գրքոյկում. աշակերտներից մէկը պատմում է իր և իր ընկերների՝ գլխով անցածները:



ՓՈՔՐԻԿ ՀՆՐՈՍՆԵՐ

Պարուն էր. այդ գարնան փառքն ու արեը Գարիբալդին էր: Նրա վերջին փայլուն յաղթանակները գրաւել էին բոլոր իտալացիների, ինչպէս և մեր փոքրիկ գաւառաքաղաքի բնակիչների սրտերը: Այդ ժամանակ ես սովորում էի դպրոցում: Ամեն շաբաթ Տուրինի գծով կամաւոր զինուորներով լեքը գընացքներ էին ուղևորւում Գարիբալդու բանակը: Դպրոցներում աշակերտութիւնը սաստիկ յուզուած էր, իսկ ուսուցիչներն իրենց ամբիոնից երկինք էին բարձրացնում Գարիբալդուն և նրա յայտնի «հազար քաջերի» քաջագործութիւնները: Մեր իտալերէն կամ լատիներէն գրած բոլոր շարագրութիւնների սկզբում կամ վերջում պիտի յիշէինք Գարիբալդու անունը: Ժողովրդական հե-

րոսի այդ քաջութիւններով ոգևորուած աշակերտութիւնը չէր կարողանում պարապել, յաճախ էր պատահում, որ կիրակի օրերը աշակերտութիւնից կազմած երգեցիկ խումբը եկեղեցում աղօթքներից անցնում էր ազգասիրական երգերի:

Ահա այդ սաստիկ զրգուած աշակերտներիցն էինք ես և դպրոցի ընկերներիցս երկուսը՝ մէկը բժշկի, իսկ միւսը կուսակալութեան քարտուղարի տղան:

Մեզանից ամենամեծը 14 տարեկան էր, իսկ ես 13և կէս:

Մի անգամ հաւաքուեցինք երեքով զազանի խորհրդակցութեան. ենթադրելով, որ Գարիբալդին մեր օգնութեան կարիքն է զգում, որոշեցինք միասին գնալ նրա մօտ Սիցիլիա:

Ծնողներից համաձայնութիւն ստանալու մասին մտածելն անգամ աւելորդ էր: Ստիպուած պիտի նրանցից ծածուկ գնայինք:

Երգուեցինք ոչ սքի չը յայտնել մեր

զաղտնիքը և իսկոյնեւ սկսեցինք պատրաստութիւն տեսնել իրագործելու մեր միտքը:

Մեր քաղաքում կամաւոր զինուորներ հաւաքող մի կոմիտէ կար, որի կարգադրիչը մի հարուստ, կրթուած և յայտնի իրաւաբան էր: Բոլոր կամաւոր զինուորներին կոմիտէն բաժանում էր խմբերի և նաւերով ուղարկում էր նոցա զէպի Ջենովա: Սեփական միջոց չունեցողներին բացի տոմսակից, տրւում էր նաև մի փոքրիկ գումար նպաստ. այդպիսի կամաւորները գերակշռող մեծամասնութիւն էին կազմում:

Մենք, ի հարկէ, ցանկանում էինք գնալ Սիցիլիա մեր սեփական հաշուով, բայց որովհետև աւելի շատ բուռն ոգևորութիւն ունէինք, քան միջոց, աստի մենք էլ պէտք է կոմիտէի օգնութեան դիմէինք:

Եւ ահա, սաստիկ յուզուած, մենք առաջին անգամ բաղխեցինք կոմիտէի նախագահի դուռը: Կարծես, այժմս էլ աչքիս առաջ լինի այն կարմիր պատ-

տառով փոքրիկ սենեակը, որի մէջ տեղում կանգնած էր վեհ արտաքինի տէր նախագահը: Նա բարձրահասակ, շէկ, երեսը մաքուր ածիլած, սառն ու թափանցող աչքերով, վերին աստիճանի խիստ, քաղաքավարի և քիչ խօսող մի մարդ էր: Նա ընդունեց մեզ շափազանց սիրալիր, կանգնած լսեց մեր խնդիրը և ուշադիր հայեացք ձգեց մեզ վրայ, կարծես, ուսումնասիրում էր ամեն մէկին: Այնուհետև մօտեցաւ սեղանին, առանձին թղթի վրայ գրեց մեր ազգերը և ասաց.

— Անցէք իմ մօտ երեք օրից յետոյ ճանապարհուելու օրը իմանալու համար:

Էլ ոչ մի բան չասաց. բայց խօսելու այս կարճ ու ազդու եզրնակը ուժեղ ապաւորութիւն թողեց մեզ վրայ:

Գործի մարդ է և ոչ խօսքի: Ուրեմն մեր գործը վերջացած է:

Ուրախութիւնից խելքներս կորցրածի պէս դուրս եկանք նրա մօտից, կարծես արդէն հագել էինք Գարիբալդեանների կարմիր շապիկները:

Երեք օր այդ աննկարագրելի յափըշտակութեան մէջ անցկացրինք:

Մենք ճանապարհուում ենք, այո, ճանապարհուում ենք, ճանապարհուում: Մնաս բարև լատիներէն, մնաս բարև հանրահաշիւ, մնաս բարև հին պատմութիւն:

Սակայն այն միտքը, որ մենք ճանապարհուելու ենք առանց մնաս բարև ասելու ծնողներին, ճնշում էր մեզ:

Իսկապէս մեր այդ զգացմունքը աւելի խղճահարութիւն էր դէպի ծնողները և ոչ թէ անշատմանը յաջորդող վիշտ:

Այդ խղճահարութեան զգացմունքը մեղմանում էր մեր այն դատողութեամբ, թէ ծնողներին առաջի վայկեանում մեր ճանապարհուելը ուժեղ ցաւ կը պատճառէ, բայց այնուհետև նրանք կուրախանան մեր ձեռք բերած փառքով: Արևի փայլի պէս այն ևս անկասկած էր, որ հէնց առաջի ճակատամարտում անուն պէտք է վաստակէինք: Արդէն ուրախանում էինք այն մտքով, որ Գարիբալ-

զին մեզ առանձին ուշագրութեան կար-
ժանացնէ: Բայց առանց փոխնորդ վեր-
նաշորերի և սպիտակեղէնի չէր կարելի
գնալ. այդ մասին որքան կարելի է շուտ
պիտի մտածէինք: Սակայն այս բոլորը
այնպէս պէտք է անէինք, որ մեր տա-
նեցիներէից ոչ ոք ոչինչ չը նկատէր:

Նորից հաւաքուեցինք խորհրդակ-
ցութեան, ուր որոշեցինք ընտանեկան
մի փոքրիկ թաւան կազմակերպել յա-
նուն հայրենիքի: Բացի այդ, մենք բոլորս
գեռ մի փոքրիկ գումարի կարիք էինք
զգում, որովհետեւ չէինք ցանկանում
զիմել կոմիտէի օգնութեան: Այս դժ-
ուարութիւնից ազատեց մեզ բժշկի
որդին:

Նա ոսկէ, ինչ որ թանգազին քարով
մի մատանի ունէր, որին առասպելական
արժողութիւն էր վերագրում: Այդ մա-
տանին խոստացաւ ծախել մօտակայ
քաղաքում և փողը երեքիս մէջ հաւասար
բաժանել:

Յուզուած այդ առաջարկից, մենք
սկսեցինք շնորհակալութեամբ համբու-

րել նրան և յայտնեցինք, որ նա հրա-
շարի սիրտ ունի:

Ամեն ինչ կարգին էր գնում:

Երբորդ օրը, սրտատրոփ նորից ե-
կանք իրաւաբանի մօտ: Նա ընդունեց
մեզ իր սովորական լուրջ քաղաքավա-
րութեամբ, և ուղղելով մեզ վրայ իր
սառն, թափանցող աչքերը, ասաց.

— Պարոններ, շատ ցաւում եմ, որ
այս երկուշաբթի ուղևորուող նաւի բո-
լոր տեղերը բռնուած են, ստիպուած
պիտի սպասէք յաշորդ նաւին, բարի
եղէք եր ք օրից յետոյ նորից անցնել
իմ մօտ:

Մենք սաստիկ ցաւեցինք, բայց
ձար չկար: Մնում էր ենթարկուել կար-
գադրութեան և սպասել:

Սարսափելի դանդաղ էր անցնում
այդ երեք օրը:

Եթէ ճաշերից յետոյ քաղաքից դուրս
զբօսանքի չը գնայինք, անհամբերու-
թիւնից և սպասողական դրութիւնից կը
խելազարուէինք:

Երբորդ օրը իրաւաբանը ընդունեց

մեզ աւելի քաղաքավարի, բայց այս անգամ էլ չը մխիթարեց:

— Դուք, պարոնայք, ստիպուած պիտի համբերէք և սպասէք դարձեալ մի քանի օր: Դուրս է գալիս, որ դեռ անցեալ երկուշաբթի նաւի բոլոր տեղերը արդէն բռնուած են եղել. նոքա նախօրօք պիտի յայտնէին մեզ, բայց մոռացել են: Մօտս եկէք հետևեալ շաբաթ օրը:

Էլի ձգձգուեց ժամանակը:

Նշանակուած օրուայ նախօրեակին մեր մէջ կասկած արթնացաւ. թէ մի գուցէ իրաւաբանը իմացել է, որ մենք մտադիր ենք առանց ծնողների թշուառութեան ուղևորուել և որոշել է խաբարել մեզ մինչև այն ժամանակը, երբ Սիցիլիան արդէն ազատուած կը լինի:

Սոսկալի զայրացանք բոլորս, և որոշեցինք իսկոյն և ետ գնալ և երեսուսու երեսուսուել նրա հետ այդ մասին:

Բժշկի որդուն, որը մեզնից ամենամեծ էր, լիազօրեցինք լինել մեր ներկայացուցիչը:

Հէնց նոյն օրը, վճռական կերպով ուժեղ բաղիւնցինք իրաւաբանի դուռը: Նա զարմացաւ օրառաջ տեսնելով մեզ իր մօտ, բայց և այնպէս ընդունեց սովորական քաղաքավարութեամբ:

Բժշկի որդին սկսեց իր ճառը: Նա խօսում էր երկար և գեղեցիկ: Սկզբում յայտնեց մեր կասկածները, յետոյ անցաւ յորդորական խօսքերի:

«Մտերմութիւնն ու բարեկամութիւնը 'չը պիտի ազդէ այն մարդու վրայ, որը բարձր պարտականութիւններ է կատարում: Երկու օր առաջ ուղարկուած գօրախումբը ապացոյց է այն բանի, որ նաևում բոլոր տեղերը առաջուց բռնուած չեն եղել: Հասակը չի կարող արգելք հանդիսանալ: Պայերմօյում կուտղների շարքում կային մինչև անգամ տասներկու տարեկան երեխաներ: Ամեն մի քաղաքացի իրաւունք ունի հայրենիքի համար արիւն թափելու: Որքան էլ այդ մեզ թանգ արժե՛նայ, որոշել ենք գնալ Գարիբալդու մօտ,

և կը գնանք: Այժմ մենք սպասում ենք ձեր վճռական պատասխանին»:

Սառն աչքերով այդ մարդը լուռ լսեց մինչև վերջը և հանդիստ պատասխանեց:

—Արտայայտածդ գգացմունքները պատիւ են բերում քեզ և ընկերներիդ: Ամեն ինչ արուած է, և եթէ չ'ընդհատիցի քեզ, միմիայն նորա համար, որ պէս զի մինչև վերջը լսեմ ազնիւ ազգասիրական ճառք: Նաւում ձեզ համար արդէն բռնուած են տեղերը: Վաղը առաւօտեան ժամը 5-ին գորախումբ ենք ուղարկում Տուրին և Ջենովա: Գնացքը ուղևորուելուց կէս ժամ առաջ պիտի լինէք կայարանում:

Արիւնը գլխներս խփեց և մեր սիրտը սկսեց ուժեղ բաբախել: Հազիւ մեզ զսպեցինք. ուրախութիւնից քիչ էր մնում գրկէինք իրաւաբանին:

—Շնորհակալ ենք ձեզանից. —բացականչեց մեր ճառախօսը. —իսկ տոմասակները . . .

—Վաղը առաւօտեան կայարանում կը ստանաք ինձանից:

Տաքացած գլխներով դուրս եկանք նրա մօտից:

Սանդուխքների վրայ գրկախառնուեցինք և այդտեղ և ետ որոշեցինք քողաքից դուրս գնալ և բոլոր հարցերի վերաբերեալ վերջնական վճիռներ կայացնել:

Որոշեցինք դուրս գալ տանից մի ժամ առաջ, այսինքն երեքին, երբ դեռ մութ կը լինի, և հանդիպել իրար նախօրօք նշանակած տեղում, իսկ այնտեղից միտօին գնալ կայարան:

—Եկէք, հրապարակում հաւաքուենք:

—Շատ լաւ.

—Իսկ իրար մթնում ի՞նչպէս ճանաչենք.

—Ազդանշան հնարենք.

Սան Ֆերմօ.

—Կա՛ւ, իսկ պատասխանք.

Վարիզէ.

1859 թուականի Գարիբարդու տօրած յաղթութիւնների անուններն էին դրանք:

Քարտուղարի սղան գտաւ, որ լաւ

կը լինէր, եթէ մեր ծնողներին մնաս բարևի նամակ թողնէինք:

Այս առաջարկը ընդունուեց միաձայն: Գործը արագ վերջացնելու համար որոշեցինք բոլոր նամակները գրել նոյն բովանդակութեամբ:

Քարտուղարի տղան մատիա և թուղթ գնելու համար քաղաք վազեց ու կայծակի արագութեամբ իսկոյն վերադարձաւ: Չոգելով նստարանի առաջ, որի վրայ գրել էինք մեր թղթերը, սկսեցինք նամակներ շարագրել. ամեն մի բոլէ այս ու այն կողմն էինք նայում, չը նայեած որ այդ ամայի տեղում բոլորովին մենակ էինք:

Նամակի հետևեալ վերջաբանը յուզեց մեզ:

«Մնաք բարեաւ, սիրելի ծնողներ: Հայրենիքը կանչում է մեզ: Աղօթեցէք ձեր որդոց համար: Յուսով ենք, որ Աստուած շուտով մեզ նորից իրար կը միացնի: Կէցցէ Գարիբալդին»:

Իրար ձեռք սեղմելով մենք բաժանուեցինք:

Մուլթն էր, երբ տուն վերադարձայ:

Օգտուելով այն հանգամանքից, որ մայրիկս զբաղուած էր խոհանոցում, ես սկսեցի փախուստի համար անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնել:

Մի քանի բոլէում պատրաստեցի սպիտակեղէնի կապոցը և անկողնի տակ թաղցրի: Այժմ մնում էր վճուել ամենադժուարը. գիշերը ինչպէս դուրս գալ տանից: Բանալին, որը միշտ դռան մէջն էր լինում, վերջին ժամանակները, չը գիտեմ ինչու, էլ չէր երևում: Այդ պատճառով որոշեցի օգտուել այն պարանից, որը մի ժամանակ գործ էի ածում մարմնամարզութեան համար: Սենեակիս պատուհանը դուրս էր գալիս պատշգամբ, որի վանդակապատից կապեցի պարանը և միւս ծայրը ազատ ցած թողեցի:

Դարպասի դուռը պիտի բանար դռնապանի իմ հասակակից տղան, որի համաձայնութիւնը ես աշխատել էի առաջուց անել: Երբ վերջապէս ամեն ինչ պատրաստ էր, մաքրեցի երեսիցս

*

կաթկթող քրտինքը, փոքր ինչ կարգի բերեցի ինձ և զնացի ընթերելու:

Այս գիշեր հայրս ու մայրս և բոլոր տանեցիները առանձնապէս սիրաւիր և ուրախ էին, ուստի նոցա աւելի խղճացի: Ամենից մեծ ցաւ էր պատճառում ինձ մայրիկս. քաջութիւնս չը կորցնելու համար աշխատում էի խուսափել նրա հայեացքից:

— Խեղճ մայրիկս, — մտածում էի ես, — որպիսի տխուր առաւօտ է սպասում քեզ:

Ես երեակայում էի նրա վիշտը, երբ իմ դատարկ անկողինը կը տեսնուէր երեակայում էի նոյնպէս հայրիկի և բոլոր տանեցիների վիշտն ու իրարանցումը. էլ ինչ ախորժակ կարող էր լինել:

Հազիւ կարողացայ նստել մինչև ընթերիքի վերջը. ապա յայտնեցի, որ գլուխս մի փոքր ցաւում է և զնացի դուրս թարմ օդ ծծելու:

Քնելուց առաջ մայրիկիս մնաս բարև ասելիս, քիչ էր մնում մոմը ձեռ-

քիցս ընկնէր. հազիւ կարողացայ արտասանել սովորական «բարի գիշեր» խօսքերը:

Տարաբախտաբար մայրս ոչինչ չը նկատեց. այդ ինձ ուրախացրեց:

Մինչև կէս գիշեր աչքս փակել չը կարողացայ. հոգուս մէջ պարզ պատկերանում էին Գարիբալդիանների յարձակումները և պատերազմից փախչող թշնամու բանակները: Բայց յոգնածութիւնը յաղթեց և ես քնեցի թեթև ու անհանգիստ քնով: Ժամը երեքին աշտարակի ժամացոյցի ձայնից արթնացայ:

Շտապ վեր թռայ, և ի՛նչ . . . զարմանքից քիչ էր մնում ճշայի:

Մոմը ձեռքին առջև կանգնած էր մայրս:

Յուսահատական մի ճիշ դուրս թռաւ կրծքիցս. «ինձ մատնեցի՛ն», նոյն վայրկեանում վրայ վազեցի դէպի շորերը և որոշեցի, ինչ կուզէ լինի, փախչել:

Մայրս յետ պահեց ինձ. նստեց անկողնիս վրայ, գրկեց ինձ և մազերս շոյելով ասաց.

—Չէ, որդեակա, դու չես վշտացնի մայրիկիդ, չես գնալ տանից...—

—Բայց ինձ սպասում են ընկերներս, աղաղակեցի ես բարկացած.—
Նոքա կը համարեն ինձ ստո՛ր, վախկո՛ւս... ես անպատուած եմ... թոյլ տուր, գնամ... մայրիկ. ես պէտք է գնամ...—

Ես աշխատում էի ազատուել նրա գրկից:

—Ո՛չ, որդեակա,—քնքոյշ պատասխանեց նա. ընկերներդ քեզ չեն սպասում: Կոմիտէի նախագահը իմանալով, որ դուք գնում էք առանց ձեր ծնողների թոյլտուութեան, որոշել է տեղեկացնել այդ մասին ձեր ծնողներին: Քո երկու ընկերներդ, ինչպէս դու, այժմ իրենց մօր գրկումն են և հաւատայ ինձ, որ թոյլ չեն տալ նոցա փախչելու: Այդ պատճառով դու չես կարողեղ համարել անպատիւ եղած, որովհետեւ բոլորն էլ կ'իմանան, որ քեզ ուժով են պահել: Իսկ մեր աչքում քո վարմունքը այն պատիւն ու արժողու-

թիւն կունենայ, որը կունենար այդ մտադրութիւնը իրականացնելուց յետոյ: Այդ վեհանձնութեան համար քեզ աւելի կը սիրենք: Օ՛հ, իմ սիրելի որդեակա, դու ուզում էիր զոհուել հայրենիքի համար, բայց մտածեցի՞ր արդեօք, թէ մայրդ առանց քեզ ինչպէս էր ապրելու:


Կատաղութիւնս հանդարտուեց և տեղ տուեց մի այրող ցաւի. անյոյս խեղատուողի նման ամեն ինչ մօրս պատմեցի:

Ես ասացի, որ դա կեանքիս ամենափառ ցանկութիւնն էր, հոգուս պահանջը, երջանկութեանս երազը. որ ես այսուհետեւ էլ երբէք զո՛հ չեմ կարող լինել կեանքիցս, որովհետեւ այդ վերքը միշտ կայրուի սրտիս մէջ: Օ՛հ, մայր իմ, թոյլ տուր գնամ. աղաչում եմ, թոյլ տուր, եթէ չես ուզում ինձ զրժբախտացնել:

Բայց չկարողացայ երկար դիմադրել: Սրտանց գրկում էր մայրս ինձ և քնքոյշ շոյելով ասում.

—Ո՛չ որդեակա, մի ասի, որ դու

ИВАН ОТЕЦ
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Кадомый Наум
СССР



այսուհետեւ դժբախտ կը լինես: Փա-
փազիդ կը համեստ, բայց մի փոքր
ուշ... Այժմ կուտելու համար դեռ
չափազանց փոքր ես: Շատ ծանր է
մտածել, բայց ինչպէս երևում է,
դժբախտաբար Իտալիան ապագայում
դեռ շատ կռիւներ է մղելու: Այն ժա-
մանակ Գարիբալդին նորից կը դիմի
երիտասարդութեան իր կոչով: Դու ար-
դէն մեծացած կը լինիս և ես կը կա-
տարեմ իմ պարտքս: Ինչպէս իտալացի
բոլոր մայրերը իրենց զաւակներին, ես
էլ կուզարկեմ քեզ Գարիբալդու մօտ,
կը յանձնեմ քեզ նրան ինչպէս հօր. և
արտասուելի, բայց հոգուս հաստատ
որոշումով կը տամ քեզ մայրական օրհ-
նութիւնս: Իսկ այժմ դու իմ մօտ
պէտք է մնաս: Հանգստացիր և մնայ
քեզ այնքան սիրող մայրիկիդ մօտ:
Հաւատայ ինձ, որ եթէ Գարիբալդին
այստեղ լինէր և լսէր այս բոլորը, նա
կասէր քեզ, որ ես արդար եմ:

Պառկիր նորից իմ սիրելի որդեակս
և աշխատիր հանգիստ քնել: Ես քեզ


վշտացրի, բայց այլ կերպ վարուել չէի
կարող և հաւատայ, որ այս բոլորը
սրտի կակիծով եմ արել:

— Դու չես բարկանայ, այդպէս չէ...
դու չես բարկանայ քո խեղճ մայրիկիդ
վրայ:

Մայրիկի փաղաքշական խօսքերը
ինձ լացացրին, որով սակայն վիշտս
չբացաւ:

Եւ մինչ լալիս ու համբուրում էի
նրան, ինձ թւում էր, թէ տեսնում եմ
փառքով պսակուած Գարիբալդու կեր-
պարանքը, որը հայրական ներողամտու-
թեամբ ժպտում էր ինձ...

Երկու ժամից յետոյ, երբ արեւը
արդէն ծագել էր, ես արթնացայ հո-
գով հանգստացած:





22479

2172

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ
ՍՍՏՐ
СССР

Լոյս է տեսել նոյն քաղաքացիի՝
ԱՄԻՉԻՍ Գնացք ազատող աղջիկը
գինը 5 կոպ.

→: ԳԻՆՆ Է 7 ԿՈՊԵԿ ←: